Հավելված
Գյումրի համայնքի «Էյլիթիա – մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2024 թվականի փետրվարի 09-ի N13 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Էյլիթիա– մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Էյլիթիա– մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակ ( 0.56դրույք)** | 1) **Որակավորման պահանջները՝**<br>նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ :<br>2) **Ընդհանրական պահանջները**.<br>նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են նախադպրոցական կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն, համայնքային ոչ առևտրայի կազմակերպության օրինակելի կանոնադրությունը»,<br>բ. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն.<br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի հիմունքները, գ. ՀՀ աշխատանքային օրենսդրության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:<br><br>**Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային Հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| **Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2024 թվականի մարտի 14–ին, ժամը՝ 11:00** | | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Էլիթիա – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 093927124): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022 թվական N471 - Ա/2 հրաման):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:** | | **2024 թվականի մարտի 07–ը ներառյալ:** |